

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Վիրուսային հեպատիտների վերահսկման և կանխարգելման 2015- 2020 թվականների նպատակային ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

«Վիրուսային հեպատիտների վերահսկման և կանխարգելման 2015–2020 թվականների նպատակային ծրագրի ընդունման մասին» Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ռազմավարական ծրագրի միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1913-Ն որոշուման Հավելված 2-ով սահմանված միջոցառումների ցանկի 11-րդ կետի 1-ին ենթակետի պահանջով:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության գնահատմամբ երկրագնդի բնակչության մեկ երրորդը ունեն հակամարմիններ հեպատիտ Բ-ի վիրուսի հանդեպ, իսկ 350-400 միլիոն անձանց մոտ ավտորոշվել է քրոնիկ հեպատիտ Բ, ընդ որում , միջինը նրանցից 25 տոկոսը կյանքի ընթացքում մահանում են լյարդի ցիրոզից և հեպատոցելուլյար կարցինոմայից/: Աշխարհում լյարդի ցիրոզի առնվազն 60 միլիոն դեպք կապված է քրոնիկ հեպատիտ Բ-ի հետ: Ամեն տարի շուրջ 1 միլիոն մարդ մահանում է սուր կամ քրոնիկ հեպատիտ Բ-ի հետևանքներից: Քաղցկեղի առաջացման տեսանկյունից հեպատիտ Բ-ի վիրուսը աշխարհում գրավում է 2-րդ տեղը՝ ծխելուց հետո: Շուրջ 200 միլիոն մարդ ունի հեպատիտ Զ-ի վարակ և ամեն տարի հայտնաբեկվում է 3-4 միլիոն նոր վարակված անձ: Հարկ է նշել, որ քրոնիկ հեպատիտների հետևանքով առաջացած լյարդի ցիրոզից և հեպատոցելուլյար

կարցինոմայից, ԱՀԿ-ի տվյալներով, յուրաքանչյուր տարի աշխարհում մահանում է շուրջ 1-2 միլիոն մարդ և մոտակա 10-20 տարիների ընթացքում կանխատեսվում է լյարդի հիվանդություններից մահացության աճ 2 անգամ :

Ներկայում վիրուսային հեպատիտների դեմ արդյունավետ պայքարի կազմակերպումն ու իրականացումը շարունակում են մնալ Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի արդիական խնդիրներից:

Հայաստանի Հանրապետությունում վիրուսային հեպատիտների վերահսկման և կանխարգելման նպատակային ծրագրի նպատակը վիրուսային հեպատիտների կանխարգելմանն ուղղված ազգային քաղաքականության զարգացումն է, վիրուսային հեպատիտների կանխարգելման կայուն համակարգի գործունեության ապահովումը:

«վիրուսային հեպատիտների վերահսկման և կանխարգելման 2015–2020 թվականների նպատակային ծրագրի» ընդունման դեպքում վիրուսային հեպատիտների համաճարակաբանական հսկողությունը կհամապատասխանեցվի միջազգային մոտեցումներին և կլինի համակարգված:

«վիրուսային հեպատիտների վերահսկման և կանխարգելման 2015–2020 թվականների նպատակային ծրագրի» ֆինանսավորումը նախատեսվում է պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից:

«վիրուսային հեպատիտների վերահսկման և կանխարգելման 2015–2020 թվականների նպատակային ծրագրի» մշակման ընթացքում հաշվի են առնվել ՀՀ ԱՆ «Նորք ինֆեկցիոն հիվանդանոց» ՓԲԸ-ի, ՀՀ ԱՆ «Պրոֆ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի, ՀՀ ԱՆ «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի և ՀՀ ԱՆ Ա.Ալեքսանյանի անվան համաճարակաբանության, վիրուսաբանության եվ բժշկական մակարուծության ԳՀԻ –ի մասնագետների կարծիքները: